



Ե/ՕՂ.Ղ/ՂՂՕԳԵ-ՂՂՂՂ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**Հ Ր Ա Մ Ա Ն**

№ ՂԳԵ -Ա

14, 03 2022թ.

ք.երևան

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի ՈՒՅՁՁ-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի N737-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N740-Լ որոշմամբ հաստատված Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետով.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

- Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում պետական պաշտոններ զբաղեցնող, այդ թվում՝ փրկարարական ծառայողների, քաղաքացիական ծառայողների, հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց (այսուհետ՝ ԱԻՆ աշխատողներ) տալ պարգևատրում ծառայողական գործունեության կամ հատուկ առաջադրանքների որակյալ աշխատանքների կատարման համար:
- ԱԻՆ աշխատողներին հատուկ առաջադրանքների կամ որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրել անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ օրենսդրությամբ համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ՝ օրենքով սահմանված կարգով և չափերով:
- Սահմանել, որ ԱԻՆ աշխատողների նկատմամբ պարգևատրում չի կիրառվում հետևյալ դեպքերում.
  - 1) օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- ա. թեթև կարգապահական տույժ ստացած աշխատողի նկատմամբ՝ տույժ ստանալու ամսվա և հաջորդ 2 ամիսների համար,
- բ. խիստ կարգապահական տույժ ստացած աշխատողի նկատմամբ՝ տույժ ստանալու ամսվա և հաջորդ 5 ամիսների համար.
- 2) ԱԻՆ աշխատողների ժամանակավոր անաշխատունակության հետևանքով՝
  - ա. փրկարարական ծառայողների նկատմամբ՝ 20 օրացուցային օրից ավելի աշխատանքի չներկայանալու դեպքում.
  - բ. ԱԻՆ մյուս աշխատողների նկատմամբ՝ 15 օրացուցային օրից ավելի աշխատանքի չներկայանալու դեպքում.
  - 3) աշխատանքի նոր ընդունվածներին՝ տվյալ ամսվա համար.
  - 4) փրկարարական ծառայողներին՝ փորձաշրջանում գտնվելու ողջ ժամանակահատվածում:
  4. ԱԻՆ կառուցվածքային ստորաբաժանումների և Պետական ռեզերվների գրասենյակի ղեկավարներին, Փրկարար ծառայության տնօրենին՝ յուրաքանչյուր ամսվա 25-ին աշխատաժամանակի տեղեկագրի հետ միասին ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն ներկայացնել նաև տույն հրամանի 3-րդ կետով սահմանված դեպքերի վերաբերյալ տեղեկատվություն:
  5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2021 թվականի օգոստոսի 16-ի N1022-Ա հրամանը:

14.03.2022

X

ԱՆՐԱՆԻԿ ՓԻԼՈՅԱՆ

Signed by: PILOYAN ANDRANIK 2408620155

Ա. ՓԻԼՈՅԱՆ